Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի – 2024-2025
11-րդ դասարան

Տևողությունը 90 րոպե

**1. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:**
1. բար-ացակամ, փաս-ան, եղ-ամ, բամ-ա
2. քուր-, թր-ոց, գո-ի, քրքի-
3. կոր-նթարդ, առ-նչվել, առ-նթեր, որոտ-նդոստ
4. դար-աս, անկա-տելի, թ-րտալ, ոսկեծո-

**2. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:**
1. զմ-սել, ք-թմնջյուն, ճմ-թել, ա-համարհել
2. բ-կտել, հարցախույ-, բա-պան, Երա-խ
3. ե-կելի, ա-տոտություն, հ-կել, խլափե-կ
4. կ-թնել, սա-սուռ, խ-թին, մատ-վակ

**3. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**
1. գնալ(հասնել) տարուց(տարի) օր(օրի)
2. յոթից(ութ), կենաց(մահու), թև(ածել)
3. ձեռք(սեղմում), հարավ(արևելյան), մազ(մորուք)
4. մեկ(մեկու), արքայից(արքա), դույզն(ինչ)

**4.Ո՞ր շարքի հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:**
1. ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻՋՎԱԾՔ
2. ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԳԻՐ, ՄԵԾ ՋՐՀԵՂԵՂ
3. ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ՇՔԱՆՇԱՆ
4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**5.Ո՞ր շարքի բոլոր բառերում երկու հնչյունափոխություն կա:**
1. աստղադիտարան, միջնաբերդ, դստրիկ
2. թռչնակ, մտայնություն, սենեկապետ
3. չվացուցակ, մշակութային, հոգաբարձու
4. սննդարար, արևմտամետ, մեղվաբուծություն

**6. Նշի՛ր այն շարքը, որի բոլոր բառերի արմատներին կարող է միանալ –ին վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):**
1. հեշտընկալ, լռակյաց, ինքնահավան,
2. նրբանցք, հանդիպակաց, առաջամարտիկ
3. գետեզր, խորաքնին, մթնշաղ,
4. կաղնուտ, տիկնիկ, դյուրընկալ

**7. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**
1. զառամյալ, օձաբարո, քառակուսի, ազնվացեղ
2. վարչակարգ, բազմատեսակ, արտերկրացի
3. սրտառուչ, ակնածանք, եռոտանի, վերնատուն
4. հանքաքար, աչքաչափ, բերքատու, բաղաձայնույթ

**8.Ո՞ր շարքում է 2 բառերի իմաստները սխալ բացատրված:**
1. հովատակ-արու ձի, բաղարջ- անթթխմոր հաց
2. խավարտ- ականակիր մութ, սակառ- հնագույն նվագարան
3. նիգ- մետաղյա ձող, բախտակ- ձկան տեսակ
4. նշտար- վիրաբուժական դանակ, բավիղ- խճճված ճանապարհ

**9. Ո՞ր շարքի դարձվածքներն են ճիշտ բացատրված:**
1. գլխին տալ- զղջալ, բերան բաց անել- անիմաստ խոսել
2. ժամավաճառ լինել-իզուր ժամանակ վատնել, կատվի դրախտ-անիմաստ կյանք
3. դանայան տակառ-ապարդյուն աշխատանք, աչք ծակել-փայլել
4.գլուխը լցնել- մինչև վերջ լցնել, առաջին ջութակ- որևէ բնագավառի գլխավոր դեմք

**10. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում –եր վերջավորությամբ:**
1. անասնակեր, կարմրախայտ, հետիոտն, նուռ
2. լուսանցք, խմբագիր, արշալույս, տոնածառ
3. մեծատուն, նստացույց, դյուցազն, արկղ
4. հորատանցք, ստուգայց, ոտնաձայն, լրագիր

**11.Ո՞ր շարքում են բայի միայն պարզ ժամանակաձևերը:**
1. չի խոսում, պետք է լսենք, լո՛ւռ կացեք, կպատմեմ
2. չեմ փախչի, տանեին, մեկնելու են, չեմ գնա
3. ասում էի, մի՛ գրեք, գալիս-գնում են, զգո՛ւյշ եղիր
4. եկան-գնացին, թույլ մի՛ տվեք, պիտի վեր կենա, կգնամ

**12. Ո՞ր շարքի բոլոր բայերն են անորոշ դերբայներ.**
1. փախչել, մոտենալ, վերացնել, մրոտել
2. խենթացնել, խմեցրել, սնանկանալ, թռել
3. վախենալ, հեռացրել, այլայլվել, թանկացել
4. բարկացնել, ընկերանալ, դիպել, ամուսնացնել

**13. Ո՞ր շարքում են բոլոր այն բառերը, որոնք կարող են գործածվել տարբեր խոսքիմասային արժեքներով :**

1. ընդամենը, մասին, կարծես, հետ, անկախ
2. հետո, այլ, հանդերձ, սակայն, ներքև
3. փոքրիշատե, ապա, էլ, գրեթե, առաջ
4. դարձյալ, նման, վաղօրոք, ասես, հեռու

**14. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1. Նրա՝ ցրտից կապտած ոտքերն ընդարմացել էին, աչքերը՝ պղտորվել շուրջը տարածվող ծխից:
2. Անփորձ աչքի համար առեղծված է՝ ինչպես են քարերը ագուցվել միմյանց՝ ստեղծելով քարակոփ կերտվածք:
3. Թվում էր՝ երկնքից թափվում էր կրակի հեղեղ, որ վայրենի մռնչյուն արձակելով՝ ավերում էր իր ճամփին պատահած ամեն ինչ:
4. Ինչպես է հորս հանդիպել, երբ և որտեղ են ամուսնացել՝ չգիտեինք. ոչ մի փաստաթուղթ չէր պահպանվել. ամեն ինչ հրո ճարակ էր դարձել:

**15. Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1. Ոչ բոլոր բայերը կարող են ստանալ պատճառական ածանցներ:
2. Որոշ շաղկապներից առաջ դրվում է բութ:
3. Բոլոր կապերն ու շաղկապները հոլովվում են:
4. Մակբայը և կապը քերականական խոսքի մասեր են:

**16. Տրված պարզ նախադասություններից քանիսն են ոչ ճիշտ փոխակերպված բարդի:**

1.Հինավուրց մատուռն այնտեղ է, ուր միանում են երկու կողմերից եկող գետերը:
Հինավուրց մատուռը երկու կողմերից եկող գետերի միանալու տեղում է:

2.Մայրը շատ էր անհանգստանում որդու՝ ուշ տուն գալուց:
Մայրը շատ էր անհանգստանում որդու համար, որ ուշ էր տուն գալիս:

3.Աղջիկը հանկարծ զգաց ինչ-որ մեկի՝ իրեն անթարթ նայելը:
Աղջիկը հանկարծ զգաց, որ ինչ-որ մեկը անթարթ իրեն է նայում:

4. Ես միշտ էլ վախեցել եմ քեզնից՝ ինձ ճիշտ չհասկանալու համար:
Ես միշտ էլ վախեցել եմ, որ դու ինձ ճիշտ չես հասկանա:

5. Նոր ոճիրներ են ծնվում ոճրի հանդեպ աշխարհիս հզորների անտարբեր լինելուց:
Նոր ոճիրներ են ծնվում ոճրի հանդեպ, քանի դեռ աշխարհիս հզորները անտարբեր են:

**17. Դերբայական դարձվածներից քանիսի բնույթն է ճիշտ նշված:**
Խինդ ու երջանկություն կա նրա՝ կյանքի փորձություններով անցած խոր հայացքի մեջ: (հատկացուցիչ)
Ես միանգամայն հավատում էի նրա արդար ու անմեղ լինելուն: (հանգման խնդիր)
Իր ազգի մշակույթը չընդունողը, ըստ իս, չպետք է խոսի հայրենասիրությունից: (ենթակա)
Զեկուցողը քննադատվեց այդ խնդրի կարևորությունը ամենևին չհասկացողների կողմից: (անջատման խնդիր)
Ունկնդիրներին անչափ հաճելի էր նրա՝ մաքուր հայերենով և հարուստ բառապաշարով համեմված խոսքը: (ենթակա)
Աշխատի՛ր հեռու մնալ ալկոհոլի նկատմամբ սեր ունեցողներից: (անջատման խնդիր)

**18.Ենթակա երկրորդականով քանի՞ նախադասություն կա:**
Շատ ուրախ եմ, որ մենք վերջապես հանդիպեցինք:
Ինձ համար մեծ ուրախություն էր, երբ ամբողջ ընտանիքը հավաքվում էր և միասին ընթրում:
Սիրում եմ, երբ մարդը չի գերագնահատում իր կարողությունները:
Դեռևս հայտնի չէ, թե երբ են ավարտվելու դպրոցի վերանորոգման աշխատանքները:
Առայժմ այն է հասկացել, որ ինքը աններելի սխալ է գործել:
Կարծես երեկ էր, որ դասընկերներով հավաքվել էինք պապիս ամառանոցում:

**19. Նախադասություններից քանիսո՞ւմ համաձայնության և խնդրառության սխալներ կան:**
Ոչ հաճախ էր պատահում, որ հարևաններից մեկը կամ մի պատահական ճամփորդ մտնեին նրա խանութը:
Մենք գտանք երեխաներին, որոնք հանգիստ խաղում էին ծովափում:
Նա մանրամասն ծանոթացավ իմ ուղարկած փաստաթղթերի հետ:
Հայ մարզիկն իրեն օգտին արդեն գրանցել էր տասնհինգ միավոր:
Լեռնագնացների խումբը պատրաստ էր մեկ ժամից մեկնել դեպքի վայր:

**20.Նախադասության անդամների ձևաբանականական վերլուծության մեջ քանի՞ սխալ կա:**
Տեսնելով իշխանի չքնաղ դստերը՝ մարդիկ, մոռացած իրենց գործերը, կանգ էին առնում՝ հիացմունքով նայելու նրան:

տեսնելով- պարզ բայ, ներգործական սեռ
դստերը- հասարակ գոյական, հայցական հոլով
մոռացած – ածանցավոր բայ, հարակատար դերբայ
գործերը- որոշյալ առում, ուղղական հոլով
կանգ էին առնում – հարադիր բայ, ներկա ժամանակ
նայելու- պարզ բայ, ներգործական սեռ